ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ https://www.ardshinbank.am/for-you/avand?lang=hy հղմամբ:

Այս տեղեկատվական ամփոփագիրը հանգամանորեն ընթերցելիս Դուք կարող եք ծանոթանալ Բանկի կողմից առաջարկվող ավանդատեսակների ցանկին, վերջիններիս տարեկան տոկոսադրույքներին և սպասարկման այլ պայմաններին:

Ընտրե՛ք Ձեզ հարմար ավանդատեսակ և դարձե՛ք Արդշինբանկի հազարավոր ավանդատուներից մեկը:

Մենք ուժեղ ենք միասին

29.04.2025թ.

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բանկն ավանդ է ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով:
Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է ավանդը, եթե այլ բան նախատեսված չէ ավանդային պայմանագրով:
Ավանդային հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն իրականացվում և այդ հաշվի վրա չեն տարածվում բանկային հաշվի մասին կանոնները:
Ավանդային հաշիվների քաղվածքները յուրաքանչյուր գործարքից հետո ավանդատուներին տրամադրվում են անվճար՝ պայմանագրով սահմանված եղանակով (առձեռն, փոստի միջոցով, էլեկտրոնային կապի միջոցով): Ավանդային հաշվի քաղվածքի կրկնօրինակի, ինչպես նաև ավանդային հաշվի վերաբերյալ տեղեկատվությունները ավանդատուին տրամադրվում են համաձայն Բանկում գործող սակագների (տես՝ https://www.ardshinbank.am/for-you/avand?lang=hy):
Ավանդային հաշիվներին կարող են մուտքագրվել երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ, եթե ավանդի պայմանագրով նախատեսված է համալրման/ավելացման իրավունք:
Ավանդատուն իրավունք ունի ավանդի, ինչպես նաև տոկոսների օգտագործման և/կամ տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի միայն նոտարական կարգով վավերացված լիազորագրի կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով դրան հավասարեցված այլ մարմինների կողմից հաստատված լիազորագրի հիման վրա:
Ժամկետային ավանդի գումարը կամ դրա մի մասը մինչև սահմանված ժամկետի ավարտը Ավանդատուի պահանջով վերադարձնելիու դեպքում վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով՝ կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող Ավանդի մասով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով և տվյալ ավանդատեսակի պայմաններով: Ավանդի գումարի մի մասը նվազեցնելուց հետո ավանդային պայմանագիրը գործում է Բանկի

տնօրինության տակ մնացած ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել ավանդային պայմանագրով նախատեսված չափով
Բանկը պարտավորվում է ավանդի ընդունման պայմաններում յուրաքանչյուր անգամ կատարված փոփոխությունները հրապարակել՝ համաձայն գործող օրենսդրության:

ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Բանկն ավանդի վրա հաշվարկված տոկոսագումարները կարող են վճարվել կա՛մ ավանդի արժույթով կա՛մ ՀՀ դրամով:
Բանկն ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելուն օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ֆիզիկական անձ-Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը:
Ժամկետային ավանդի համար սահմանված տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմա-նագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների օրական մնացորդի դիմաց Բանկը վճարում է սակագներով նախատեսված չափով:
Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տոկոսները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:
Բանկի կողմից բանկային հաշիվների օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքի չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է Բանկի ինտերնետային կայքում դրանց տեղադրման օրվանից: Տոկոսների նոր չափի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Բանկի կորպորատիվ https://www.ardshinbank.am կայքում:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ «ՍՏԱՆԴԱՐՏ»

Տարեկան անվանական տոկոսադրույքներ՝ ժամկետի վերջում վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
	մինչև 100 մլն. ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 10 մլն. ներառյալ
31 - 90 օր	6.25%	0.75%	-	3.00%
91- 180 օր	7.25%	1.75%	0.50%	4.00%
181- 270 օր	8.25%	3.00%	1.25%	5.00%
271- 366 օր	8.50%	3.25%	1.50%	5.00%
367- 549 օր	9.00%	3.50%	2.00%	6.00%
550- 730 օր	9.50%	3.75%	2.25%	5.75%

Տարեկան անվանական տոկոսադրույքներ՝ եռամսյա վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
	մինչև 100 մլն. ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 10 մլն. ներառյալ
91 - 180 օր	7.1%	1.6%	0.4%	3.8%
181- 270 օր	8.0%	2.9%	1.2%	4.8%
271- 366 օր	8.2%	3.1%	1.4%	4.8%
367- 549 օր	8.7%	3.4%	1.9%	5.8%
550- 730 օր	9.2%	3.6%	2.1%	5.5%

Տարեկան անվանական տոկոսադրույքներ՝ մենամսյա տոկոսների վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
	մինչև 100 մլն. ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 10 մլն. ներառյալ
31 - 90 օր	6.1%	0.6%	-	2.9%
91 - 180 օր	6.9%	1.5%	0.3%	3.7%
181- 270 օր	7.9%	2.8%	1.1%	4.7%
271- 366 օր	8.1%	3.0%	1.3%	4.7%
367- 549 օր	8.5%	3.3%	1.8%	5.6%
550- 730 օր	9.1%	3.5%	2.0%	5.4%

Տարեկան անվանական տոկոսադրույքներ՝ ավելացման իրավունքով և տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
	մինչև 100 մլն. ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 200'000 ներառյալ	մինչև 10 մլն. ներառյալ
31 - 90 օր*	6.1%	0.4%	-	2.6%
91 - 180 օր*	6.9%	1.3%	0.2%	3.5%
181 - 270 օր*	7.9%	2.5%	1.0%	4.4%
271 - 366 օր*	8.1%	2.8%	1.2%	4.4%
367- 549 օր*	8.5%			
550- 730 օր*	9.1%			

** Ավանդի գործողության ժամկետի վերջին 15 օրում ավելացվող գումարի տոկոսների հաշվարկը կատարվում է տարեկան 0.1% տոկոսադրույքով:*

1. *Անկանխիկ մուտքագրված գումարից ձևակերպված Ավանդի գումարը փաստացի ներդրման ամսաթվից հաշված 60 (վաթսուն) օրացուցային օր հետո համարվելու է կանխիկ:*
2. *Նշված ժամկետներից և/կամ գումարներից տարբերվող պայմաններով ավանդ ներդրվելու դեպքում՝ ավանդների տարեկան տոկոսադրույքները և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:*
3. *Հաշվեգրված տոկոսներից պահվում է օրենսդրությամբ նախատեսված հարկերը:*
4. *Ավանդը կամ դրա մի մասը ժամկետից շուտ վերադարձնելու դեպքում Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով:*

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՍՏՈՐԵՎ

Տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)

Տարեկան տոկոսային եկամտաբերության՝ տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
31 - 90 օր	6.22%	0.75%	-	2.98%
91- 180 օր	7.21%	1.74%	0.497%	3.98%
181- 270 օր	8.20%	2.98%	1.243%	4.97%
271- 366 օր	8.45%	3.23%	1.492%	4.97%
367- 549 օր	8.95%	3.48%	1.989%	5.97%
550- 730 օր	9.45%	3.73%	2.238%	5.72%

Տարեկան տոկոսային եկամտաբերության՝ տոկոսները եռամսյա վճարմամբ				
91- 180 օր	7.25%	1.60%	0.40%	3.83%
181- 270 օր	8.20%	2.92%	1.20%	4.86%
271- 366 օր	8.41%	3.12%	1.40%	4.86%
367- 549 օր	8.94%	3.43%	1.903%	5.90%
550- 730 օր	9.47%	3.63%	2.105%	5.58%

Տարեկան տոկոսային եկամտաբերության՝ ամենամսյա տոկոսների վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
31 - 90 օր	6.24%	0.60%	-	2.92%
91- 180 օր	7.09%	1.50%	0.299%	3.74%
181- 270 օր	8.15%	2.82%	1.100%	4.78%
271- 366 օր	8.36%	3.03%	1.301%	4.78%
367- 549 օր	8.79%	3.33%	1.805%	5.72%
550- 730 օր	9.44%	3.54%	2.008%	5.51%

Տարեկան տոկոսային եկամտաբերության՝ ավելացման իրավունքով և տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ				
ժամկետը	AMD	USD	EUR	RUB
31 - 90 օր	6.07%	0.40%	-	2.59%
91- 180 օր	6.86%	1.29%	0.199%	3.48%
181- 270 օր	7.86%	2.49%	0.995%	4.38%
271- 366 օր	8.06%	2.78%	1.193%	4.38%
367- 549 օր	8.45%			
550- 730 օր	9.05%			

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ $A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{\frac{D_n}{365}}}$ բանաձևից

որտեղ՝

1) A - ավանդի սկզբնական գումարն է:
2) n -ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3) N -ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4) Kn-ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5) Dn- այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_i = 0$:

ԱՎԱՆԴԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք,

Կարևոր է իմանալ

Բանկի ՄՈԲԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, ավանդների ներդրումներ և համալրումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ https://www.ardshinbank.am/for-you/mobile-banking?lang=hy հղմամբ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորված է օրենքով:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

. Եթե ավանդատուն ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 16’000’000 (տասնվեց միլիոն) հայկական դրամ է
. Եթե ավանդատուն ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7’000’000 (յոթ միլիոն) հայկական դրամ է
. Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 7’000’000 (յոթ միլիոն) հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16’000’000 (տասնվեց միլիոն) հայկական դրամով
. Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 7’000’000 (յոթ միլիոն) հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ 7’000’000 (յոթ միլիոն) հայկական դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի “Արդշինբանկ” ՓԲ ընկերությունում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ բանկային ավանդի պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

Եթե բանկային ավանդի պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարները հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԸ

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ “Հատուցման դեպք”) է համարվում “Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով “Արդշինբանկ” ՓԲԸ անվճարունակ կամ սնանկ ճանաչելը, և եթե “Արդշինբանկ” ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ ի վիճակի չէ օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում վերադարձնել ավանդները:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է Ավանդների երաշխավորման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) “Արդշինբանկ” ՓԲԸ կամ այլ բանկի միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկը Հատուցման դեպքն առաջանալու մասին Հիմնադրամին տեղեկացնում է դեպքը տեղի ունենալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմնադրամը տեղեկատվությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում կայացնում է ավանդները հատուցելու մասին որոշում, առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում և առնվազն մեկ անգամ հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում այդ մասին:

Հիմնադրամն այդ հայտարարությունը կարող է հրապարակել զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ օգտագործել ավանդատուներին տեղեկացնելու այլ եղանակ:

Հիմնադրամը հայտարարության հրապարակման պահից մեկամսյա ժամկետում մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակում է լրացուցիչ հայտարարություն:

Երաշխավորված ավանդների հատուցումն սկսվում է լրացուցիչ հայտարարությունը հրապարակվելու պահից:

Հիմնադրամը, լրացուցիչ հայտարարությունը հրապարակվելու պահից, երաշխավորված ավանդի գումարի վճարումն իրականացնող բանկի միջոցով սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցումը:

Երաշխավորված ավանդի գումարի վճարումն իրականացնող բանկին կարող եք դիմում ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ժամկետում:

Այդ ժամկետում՝ Ձեր կողմից դիմում չներկայացնելու դեպքում՝ Հիմնադրամը Ձեր երաշխավորված ավանդների հատուցում չի իրականացնում:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով:

Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանված պաշտոնական փոխարժեքով:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո Ձեր՝ “Արդշինբանկ” ՓԲԸ հանդեպ ունեցած դրամական պահանջը հատուցված գումարի չափով համարվում է բավարարված:

Հատուցման առավելագույն չափը գերազանցող գումարը համարվում է “Արդշինբանկ” ՓԲԸ պարտավորությունը Ձեր նկատմամբ, որը Ձեզ է վերադարձվելու “Բանկերի և վարկային կազմակերպությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական հաշտարարի միջոցով (ֆիզիկական անձանց դեպքում):

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, 0015, ք. Երևան,
Գր. Լուսավորչի փող., 13
Հեռ. (+374-12) 222222
e-mail: office@ardshinbank.am
URL: www.ardshinbank.am